VI

ՍԱՐԳԻՍ ՔԱՄԱԼԵԱՆ

Յունիս 13–ին, Թիֆլիսում, յանկարծամահ է եղել մանկավարժ, գրող – հեքեաթագիր Սարգիս Քամալեանցը: Հանգուցեալը ծնուել էր 1862 թ. Շուլաւերում: Աւարտել էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը եւ աստուածաբանական բարձրագոյն կրթութիւն ստացել Գերմանիայում: Սկսել էր գրել դեռ պատանի հասակից Տ. Նազարեանի «Աղբիւր» եւ «Տարազ» պարբերականներում, ապա՝ «Նոր–Դար»–ում, «Լումայ»–ում եւ այլն: Պատկանում էր պահպանողական ուղղութեան: Իր գրուածքների նիւթը, մեծ մասամբ, առնում էր ժողովրդական կեանքից եւ բանահիւսութիւնից: Քամալեանցի գրուածքներից մի ժամանակ շատ էին կարդացւում՝ «Շէն թաղաւորի աղջիկը», «Ծովինար»–ը, «Ժամանակը Ոսկի», «Խուլ Խաչիկը», «Անմեռ Աշխարհ», եւայլն, ինչպէս նաեւ Դ'Ամիցիսի «Սիրտ»–ի եւ «Աշակերտի Ցիշատակարան»–ի թարգմանութիւնները:

VII

ՈՒՐԻՇ ՄԱՀԵՐ

Անցած երկամսեակի ընթացքում, յունիս 19–ին, Պօլսում վախճանուեց վաստակաւոր դրագիտուհի Սիպիլը, որի կեանքին ու գործին առանձին յօդուած կը նուիրենք «Վէմ»–ի Զ–րդ համարում:

«Վէմ»–ի Զ–րդ համարում յօդուած կը լինի եւ երիտասարդ գործիչ Տիգրան Աւետիսեանի մասին, որի եղերական մահուան լուրը հաղորդուեց արտասահմանի թերթերում:

Ստիպուած ենք յետաձգել նաեւ Թ. Թորոմանեանի ու Մ. Վարանդեանի կենսագրութիւնները: